

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արայիկ Հարությունյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն 2019թ նոյեմբերի 20-21-ը

4. Հրավիրող Կողմը

Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության և գիտության նախարար Միխայիլ Կոտլյուկով

5. Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցելու Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ պետությունների գիտության և տեխնիկայի ոլորտի նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարների 5-րդ խորհրդակցությանը:

6. Քննարկված Թեմաները

Հանդիպմանը քննարկվել են ինչպես Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների գիտատեխնիկական գործընկերության զարգացման, այնպես էլ նոր համատեղ գիտական հետազոտությունների իրականացման հեռանկարները:

7. Հանդիպումները, Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Իմ ելույթում նշել եմ, որ Հայաստանում գիտատեխնիկական և նորարարական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային գիտական հարաբերությունների ընդլայնմանը և խորացմանը, ինչի ապացույցն է ոլորտում միջազգային համագործակցության մեծ փորձը՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների բնագավառում համատեղ նախագծերի իրականացումը: Ներկայացվել է ՀՀ-ի երկկողմանի գիտատեխնիկական համագործակցություն ծավալող երկրների փորձը, որոնցից են՝ Իտալիան, Ֆրանսիան, Գերմանիան, որոնց հետ գործընկերային հետազոտական դրամաշնորհները ֆինանսավորվում են մրցակցային հիմունքներով, ստեղծվում են համատեղ լաբորատորիաներ և այլն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Շահալի համագործակցության կազմակերպության երկրների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ զարգացնել գիտական և տեխնիկական համագործակցությունը հետազոտական տարբեր բնագավառներում, այդ թվում՝ առաջարկված գերակա ոլորտներում, մասնավորապես, բնապահպանական տեխնոլոգիաներ, էներգաարդյունավետություն և էներգախնայողություն, նորարարական տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիա և բիոինժեներիա, նանոտեխնոլոգիաներ և այլն: Առաջարկվել է նաև թվարկվածներին ավելացնել մեր երկու կարևորագույն ոլորտ՝ արհեստական բանականություն և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ելույթի ժամանակ կարևորվել է, որ Հայաստանը հանդիսանում է «Մետաքսի ճանապարհ» բարձր տեխնոլոգիական գոտու ասոցիացիայի հիմնադիր երկրներից մեկը, որի նպատակը մասնակից երկրների կազմակերպությունների և ձեռնարկությունների միջև փոխշահավետ գիտական և տեխնոլոգիական կապերի ամրապնդումն է, համատեղ նախագծերի իրականացումը:

Նշվել է նաև, որ Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է մի շարք խոշոր միջպետական գիտական համագործակցությունների, ինչպիսիք են, օրինակ, CERN /Conseil Européen pour la Recherche Nucléaire, Ժնև, Շվեյցարիա/ Միջուկային հետազոտությունների համատեղ ինստիտուտը /Դուբնա, Ռուսաստան/, իսկ 2016 թվականից հանդիսանում է Եվրոպական միության ութերորդ շրջանակային ծրագրի ասոցացված անդամ՝ «Հորիզոն 2020» գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացման համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27.11.2019

 Recoverable Signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378